ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՌԻԱՌԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ

1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան „Կուլտուրա" Բ. Բոնակայա, 14.
1912

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ՏՆՏԵՍԿԱՆ ՄԱՍԻ

1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.

72/3
6

Հոգաբարձական Խորհրդի կազմը

Նախագահ. Խորհրդի՝

Գարեգին արքեպիսկոպոս Սարուխեան
(մինչև 1910 թ. նոյեմբ. 2-ը)

և ապա **Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան**
(1910 թ. դեկտ. 29-ից)

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Մայրապետ՝ **Կ. Ճ. Աբամելիքեան** *(մինչև 1911 թ. մայիսի 2-ը) և ապա*
„ **Կ. Ղ. Թայիրեան** *(1911 թ. մայիսի 25-ից)*
Ղ. Ակնունեան
Հ. Առաքելեան
Մ. Մելիքեան *(որ և գանձապահ)*
Ս. Միլիումեան *(որ և փոխ-նախագահ)*
Ռ. Նաւասարդեան *բժշկապետ*
Տեսուչ՝ **Սթ. Մալխասեանց**

Քարտուղար՝ **Մ. Ցարուքիանեան**

Հոգաբարձական Խորհուրդը ունեցել է 1910 թ. սեպտ.-ից մինչև 1911 թ. յունիսի 23-ը 39 նիստ, որին մասակցել են՝

Գարեգին արքեպ. Սարուխեան	6	*անգամ*
Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան	16	„
Մայրապետ՝ Կ. Ճ. Աբամելիքեան	7	„
„ Կ. Հ. Թայիրեան	6	„
Ղ. Ակնունեան	39	„
Հ. Առաքելեան	27	„ *(բացակայել է քաղ.)*
Մ. Մելիքեան	28	„
Ս. Միլիումեան	33	„
Ռ. Նաւասարդեան *բժշ-պետ*	38	„
Սթ. Մալխասեանց	37	„

[illegible]

Հոգաբարձական Խորհուրդը՝ իր գործունէութեան այս երկրորդ տարեշրջանում կաշկանդուած չլինելով այլ ևս նախորդ Հոգաբարձական Խորհրդի անօրէնութիւններով, սկսեց իր անկախ գործունէութեան շրջանը։ Նախորդ ուսումնական տարուայ ընթացքում 6 ամսուայ ծանօթութիւնը դպրոցի կեանքի հետ՝ Հոգաբարձական Խորհրդի առաջ բաց էր արել մի շարք խնդիրներ, որոնք լուրջ քննութեան կարիք ունէին. այդ խնդիրները վերաբերում էին դպրոցի թէ ուսումնական և թէ տնտեսական բարեկարգութիւններին։

Նախ և առաջ, Հոգ. Խ-դը՝ ի նկատի ունենալով, որ անհրաժեշտ է անընդհատ հսկողութիւն դպրոցի վրայ և աշխատանքի բաժանումն իր անդամների միջև՝ որոշեց սահմանել շաբաթական հերթապահութիւն. հերթապահ հոգաբարձուի վրայ պարտականութիւն դրուեց՝ պատրաստել նախօրօք Խորհրդի մէջ քննուելիք օրակարգի հարցերը։

Հոգաբարձական Խորհուրդը ուս. տ. ընթացքում զրկուեց իր նախագահ՝ Գարեգին արք-եպիսկոպոս Սաթունեանից, նրա մահուամբ, որ տեղի ունեցաւ 1910 թ. նոյեմբ. 2-ին։ Այս առիթով Հոգ. Խ-դը գրաւոր դիմումն արեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Մատթէոս Բ.-ին՝ խնդրելով հրահանգ այն մասին, թէ ով պէտք է այնուհետև նախագահէր Հոգ. Խ-դի նիստերին, մինչև նոր թեմական առաջնորդի ընտրութիւնն ու հաստատութիւնը։ Դժբախտաբար այդ միջոցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ. Մատթէոս Բ.-ը վախճանուելով՝ միայն 1910 թ. դեկտ. 21-ին ստացուեց Կաթողիկոսութեան Տ. Տեղակալի գրաւոր կարգադրութիւնը, գրուած դեկտ. 17-ին, 1910 թ.

№ 1121, թէ Հոգ. Խ-դի նիստերին նախագահ է կարգվում Տ. Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանը։

——

Հոգ. Խ-դը նախագահ Գարեգին արք-եպիսկոպոս Սաթունեանի մահուան առիթով իր 1910 թ. նոյեմբ. 4-ի արտակարգ նիստում որոշեց. 1) յարգել յոտնկայս հանգուցեալի յիշատակը, 2) հանգուցեալի դագաղի վրայ դպրոցի կողմից պսակ դնելու փոխարէն՝ ի յիշատակ նորա, ազատել դպրոցիս չքաւոր աշակերտուհիներից 25 հոգու ուսումնավարձից, մինչև 150 բուբլի գումարի, ներկայ 1910/11 ուս. տ. համար, 3) ամսի 7-ին, կիրակի, թաղման ներկայ լինել Հոգաբարձական և Մանկավարժական կազմերով դպրոցիս Զ. և Է. դասարանների աշակերտուհիների հետ։

Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահուան առիթով՝ 1910 թ. դեկտ. 11-ին կայացրած արտակարգ նիստում որոշեց.—1) Հոգաբարձական Խ-դի և Մանկավարժ. Խմբի կողմից Սրբազան Տեղակալին տալ ցաւակցական հեռագիր այս բովանդակութեամբ.

«Նորին Սրբազնութեան Տ. Տեղակալին Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ արք-եպիսկոպոս Սուրէնեանցին, Թիֆլիսի Մարիամեան-Յովհաննեան օրիորդաց դպրոցի Հոգաբարձական եւ Մանկավարժական Խորհուրդները յայտնում են սրտագին ցաւակցութիւն եւ խորին վիշտ բոլորից սիրուած Հայաստանեայից Եկեղեցու Հովուապետի, Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ-ի վաղաժամ մահուան առթիւ, որով Հայ ժողովրդի Նրանից սպասելիք յոյսերը ի դերեւ անցան».

2) Դպրոցում դասերը դադարեցնել մինչև երեքշաբթի օրը.

3) Երկուշաբթի, ամսի 13-ին, դպրոցում Հոգաբարձական և Մանկավարժական կազմերի ու բոլոր աշակերտուհիների ներկայութեամբ հոգեհանգիստ կատարել դպրոցի կրօնուսոյցների և ս. Ստեփանոս Կուսանաց Անապատի բարեշնորհ Միաբանութեան մասնակցութեամբ։

4) Շաբաթուայ մէջ մի օր, Ներսիսեան դպրոցի Հոգաբարձութեան հետ համաձայնութիւն կայացնելով, Վանքի մայր եկեղեցում՝ ներկայութեամբ Հոգաբարձական և Մանկավարժական կազմերի և բոլոր աշակերտուհիների հոգեհանգիստ կատարել.

5) Թաղմանը պատգամաւոր ուղարկել ս. Էջմիածին Հոգաբարձական և Մանկավարժական մարմինների կողմից երկու երկու հոգի, (Մանկավարժական Խմբի կողմից տեսուչ Ս. Մալխասեանց և ուսուցիչ Իս. Յարութիւնեանը, Հոգաբարձութեան կողմից՝ բժշկապետ Բ. Նաւասարդեան և Հ. Առաքելեան *).

6) Հոգաբարձութեան կողմից դրուելիք պսակի փոխարէն՝ Մանկավարժական ժողովի ընտրութեամբ, դպրոցիս ստորին դասարանի չքաւորագոյն և աշխատասէր աշակերտուհիներից մէկին պահել դպրոցում որդեգրուհի մինչև ուսման աւարտելը ձրիաբար՝ յանուն հանգուցեալ Հայրապետի, հոգալով նաև նրա դասական պիտոյքներն ու զգեստը, յատկացնելով տարեկան 25—30 ռուբլի։

7) Կիրակի, ամսի 12-ին, Հոգաբարձական և Մանկավարժական մարմիններով ներկայ լինել կատարուելիք հոգեհանգստին Վանքի մայր եկեղեցում։

8) Թաղման օրն ևս ներկայ լինել նոյն կազմերով հանդիսաւոր հոգեհանգստին նոյն եկեղեցում։

— —

Հոգաբարձական Խորհրդի գործունէութիւնը դպրոցի տնտեսական և ուսումնական բարեկարգութեան վերաբերեալ արտայայտուած է 1911 թ. մայիսի 4-ին կայացած նիստի արձանագրութեան մէջ Տ. Եփրեմ եպիսկոպոսի նախագահութեամբ, որին ներկայ էր նաև դպրոցի հիմնադրի դուստր տիկ. Վառվառէ Քանանեանը իր Մարիամ դստեր հետ։ Այդ նիստում թէ Հոգ. Խ-դի փոխ-նախագահ Ս. Մելքումեանի, թէ Խ-դի անդամների և թէ տեսուչ

*) Ծանօթ. Բժշկապետ Բ. Նաւասարդեան և Հ. Առաքելեան հրաժարուեցին դպրոցից ճանապարհածախս ընդունել։

Սա. Մալխասեանցի ներկայացրած զեկուցումներից հետևեալ քաղուածները ցոյց են տալիս Հոգ. Խ-դի գործունէութեան էական կէտերը։ Այդ զեկուցումներից երևում է, որ նախկին տարիներում, մինչև ներկայ Հոգ. Խ-դի պաշտօնավարութեան սկիզբը, դպրոցն ուսումնական տարին վերջացրել է միշտ դէֆիցիտով՝ թէ ծախսերի մեծանալու և թէ այլ և այլ կարևոր վերանորոգութիւններ և մի նոր շէնք կառուցանելու պատճառներով. դէֆիցիտները ծածկուել են դպրոցի ունեցած 25.000 ր. գումարով, այնպէս որ ներկայ Հոգ. Խ-դի պաշտօնավարութեան սկզբին 25,000 ռուբլուց մնացել էր 3000 ռուբլի նոմինալ արժողութեամբ Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 5% օբլիգացիաներ։ Այդ պատճառով Հոգաբարձութիւնն ընդհանրապէս ձգտել է, հնար եղածին չափ, դպրոցի տարեկան ընդհանուր եկամուտը մեծացնել և այդ նպատակով արել է հետևեալը.—

1) Դպրոցապատկան քարվանսարայի կրպակների վարձագինը, որ առաջ միջին թուով տարեկան 21,200 ր. էր կազմում, բարձրացրել է մինչև 25,472 ռուբլու.

2) Ուսման թոշակից, որ ինչպէս այժմ, այնպէս էլ անցեալ Հոգաբարձութեան օրոք տարեկան նշանակուած է եղել 5 – 30 ռուբլի, անցեալներում սովորաբար 1800 ռուբլուց աւելի չի դանձուել. ներկայ Հոգաբարձական Խորհուրդը դպրոցի տեսչի աջակցութեամբ դանձել է 2323 ռուբլի, այսինքն նախահաշվում նշանակուած գումարից (2500 ր.) 177 ռուբլիով պակաս.

3) Դպրոցի 90,000 ր. նոմինալ արժողութեամբ 4% պետական ռենտայից տարեկան ստացվում էր զուտ տոկոս 3420 ռուբլի. ներկայ Հոգաբարձական Խ-դն աւելի շահաւէտ գործադրելու նպատակով, իր որոշման համաձայն, 90,000 ր. 4% պետ. ռենտան փոխարկեց Թիֆլիսի Քաղ Վարկի Ընկ. 5% օբլիգացիաների, ո ով դրամագլուխն աւելացաւ 6000 ր. (96,000 ր. նոմ. արժ. Թիֆլ. Քաղ. Վ. Ընկ. 5% օբլ.), իսկ տոկոսը՝ 1140 ռուբլով (տա-

բեկան զուտ տոկոս ստացուելու է 4560 բուբլի)։ Այս ճանապարհով ներկայ Հոգաբարձական Խորհուրդը դպրոցի տարեկան ընդհանուր մուտքը հասցրել է մինչև 31634 ր։

Այսպիսի մուտքը, սակայն, դարձեալ հնարաւորութիւն չէ տալիս Հոգաբարձական Խորհրդին իրագործելու իր մտադրութիւնները՝ դպրոցն ուելի բարգաւաճ դրութեան հասցնելու նկատմամբ։ Այսպէս Հոգաբարձական Խորհրդի ձգտումն է՝

1) Կարգի բերել դպրոցի ֆիզիքական կաբինէտը, որը միայն անունով գոյութիւն ունի ներկայումս.

2) Ձեռք բերել դրադարանի համար հայ և սուաք գրականութեան նորագոյն և անհրաժեշտ երկերը, որոնցից համարեա թէ զուրկ է ներկայ դրադարանը.

3) Դպրոցի շէնքը յարմարեցնել առողջապահական պայմաններին. դասարանները լաւ տաքացնելու համար՝ ձեռք բերել նոր սիստեմի վառարաններ, ունենալ էլէկտրական լուսաւորութիւն և այլն.

4) Բարեխիղճ և լաւ ուսուցիչներին դպրոցի հետ կապելու նպատակով՝ Հոգ. Խ-դը դպրոցիս տեսուչ Ստ. Մալխասեանցի առաջարկութեամբ, որոշել է խորհրդածութեան նիւթ դարձնել դպրոցում ուսուցիչների համար թոշակարկղ հիմնելու խնդիրը, որը ապահովելու է ուսուցչին ծերութեան կամ անկարողութեան դէպքում, որպիսին արդէն գոյութիւն ունի Ներսիսեան դպրոցում.

5) Ի նկատի ունենալով, որ դպրոցի սանուհիները մեծ մասամբ չքաւոր դասակարգի զաւակներ են, որոնք ոչ թէ միայն չեն կարողանում ուսման թոշակ տալ, այլ և զուրկ են անուղղից, որի պատճառով և յառաջադիմութիւնը նրանց մէջ կաղում է. այսպիսի չքաւոր աշակերտուհիներից գոնէ 50 հոգու դպրոցում նախաճաշ տալու խնդիրը Հոգ. Խ-դին զբաղեցնող անյետաձգելի հոգսերից մէկն է ներկայումս։ Հոգ. Խ-դի ցանկութիւնն է իր այս մտադրութիւնն իրագործած տեսնել մօտիկ ապագայում, քանի որ չքաւոր դասակարգի դա-

ւակներն են, որ իսկապէս ծառայել և ծառայում են դպրոցի բուն նպատակին—տալ Հայ ժողովրդին հայ վարժուհիներ և մայրենի լեզուն ու գրականութիւնը պահպանող մի տարր. հարուստներից շատ քիչ տոկոսն է ծառայում այս նպատակին։

Բոլոր այս մտադրութիւնները, որոնք անյետաձգելի պահանջներ են դպրոցի ապագայ յառաջադիմութեան համար, մնում են անկատար, շնորհիւ այն սահմանափակ նիւթական միջոցների, որոնց մէջ կաշկանդուած է ներկայումս Հոգ. Խորհուրդը։ Ուստի և Հոգ. Խ-դը յոյս է տածում, որ դպրոցի հիմնադրի պատուարժան ժառանգներ՝ տիկ. Վառվառէ Քանանեանին և իր քոյրերին ևս մտածելու տրիթ են տալու իրանց հօր կանգնեցրած յաւերժ կոթողի առաջադիմութեան և ազգի շահերին աւելի լայն չափով ծառայելու համար Հոգ. Խ-դի առաջ բերած մտադրութիւնները, քանի որ նրանց սրտին աւելի մօտ է այս հիմնարկութիւնը։

Դպրոցի ուսումնական մասի զեկուցումից, որ տուեց տեսուչ Ստ. Մալխասեանցը, երևաց, որ անցեալ 1909—1910 ուս. տ. նկատմամբ այս տարի նախ՝ զուտ հայկական առարկաների վրայ աւելի է ուշադրութիւն դարձուած (օր. աւելացրուած են հայերէնի, կրօնի և եկեղեցական պատմութեան դասեր), փոխարէնը հանուած են մի քանի առարկաներ, որոնք կամ աւելի մեծ պատրաստութիւն են պահանջում (օր տիեզերագրութիւնը) կամ միջնակարգ դպրոցի ծրագրին ամենևին չեն համապատասխանում (օր. կրօնների պատմութիւն և քաղաքատնտեսութիւն). աւելացուած են նաև առողջապահութեան դասերը։

Դպրոցի մէջ Վարչութիւնը աշխատել է մտցնել ազգային-եկեղեցական ոգի. այս նպատակով տարուայ ընթացքում տրուել են գրական-երաժշտական երեկոյթներ, եկեղեցում երգելու համար պատրաստուել է երգեցիկ քառաձայն խումբ. առանձին ուշադրութիւն է դարձուել աշակերտուհիների կրօնական-հոգեկան դաստիարակու-

թեան վրայ, օր. մացրուած է պարտադիր աղօթք դասարաններում՝ առաւօտեան և դասերը վերջանալիս, ատորին դասարանների աշակերտուհիները՝ դպրոցի պաշտօնեաների առաջնորդութեամբ խմբովին՝ գնացել են հաղորդուելու և այլն։

Վարչութեան ուշադրութիւնից չի վրիպել նաև աշակերտուհիների մէջ աշխատելու սէր զարթեցնելու հոգսը, որի շնորհիւ նրանք աւելի լուրջ վերաբերմունք են ցոյց տուել դէպի իրենց պարապմունքները։

Տեսչի զեկուցման մէջ առանձնապէս շեշտուած է այն հանգամանքը, որ չքաւոր աշակերտուհիների սնունդի պակասութիւնը զգալի կերպով ազդում է նրանց առաջադիմութեան վրայ. բժշկական քննութիւնը ցոյց է տուել, որ 40 հոգուց բաղկացած մի դասարանի մէջ միայն մի հոգի է կատարեալ առողջ։ Այս խնդիրը հաւասարապէս զբաղեցրել է թէ Հոգ. Խ-դին և թէ Մանկավարժական Խմբին, սակայն մինչև օրս ձեռք առած միջոցները շատ քիչ օգուտ են բերում. անհրաժեշտ է, որ դպրոցն իր միջոցներով գոնէ ամենաչքաւոր աշակերտուհիներից 50 հոգու դպրոցում նախախաշ տայ. դրա համար կըհարկաւորուի տարեկան մօտ 750 ր., որը կարելի է ապահովել 15.000 ր. գումարի %%-ով։

Հոգաբարձական Խորհուրդը ուրախ է յայտարարել այս առիթով, որ դպրոցի մեծանուն հիմնադրի դուստրը, տիկին Վառվառէ Քանանեանը, յայտնելով, որ ինքը ևս շատ հետաքրքրվում է դպրոցի վիճակով և նրա կարիքները իր սրտին մօտ են՝ խոստացաւ խորհրդակցել այս մասին իր քոյրերի հետ, և հիմնուելիք թոշակարկղին իբրև առաջին նպաստ նուիրեց 500 ռուբլի, որով հիմն դրեց այդ թոշակարկղի ֆոնդին։

— —

Հոգ. Խ-դն որոշել է բոլոր վերոյիշեալ կարիքները իրագործել. և իրագործելով նրանցից մի քանիսը՝ ներկայ

հաշուէտվութեան տարուայ ընթացքում դրել է միւս կարիքներն ևս իրագործելու ճանապարհի վրայ։

——

Հոգ. Խ-դի մէջ յարուցուել է նաև այն հարցը, որ անհրաժեշտ է հիմնել դպրոցին կից չքաւոր աշակերտուհիներին օգնող մի ընկերութիւն, որպիսին գոյութիւն ունի շատ միջնակարգ դպրոցներում։ Այդ ընկերութեան նպատակը կլինի վճարել չքաւոր աշակերտուհիների ուսման վարձը, տալ նախաճաշ, հագուստ կօշիկ և այլն։

Հոգ. Խ-դը զբաղուել է և դպրոցի համար որոշ և հաստատուած կանոնադրութիւն ունենալու հարցով, որով զբաղուել են նաև նախորդ Հոգաբարձական Խ-դները, սակայն առանց որևէ գործնական հետևանքների հասնելու. զբաղուել է նաև որոշ հաստատուած ուսման ծրագիր ունենալու հարցով։

Կանոնադրութեան ծրագիրը մշակելու համար ընտրուած է յանձնաժողով՝ բաղկացած Մանկավարժ. ժողովի մի քանի անդամներից և Հոգ. Խ-դի անդամներ՝ Հ. Առաքելեանից և բժշկապետ Բ. Նաւասարդեանից. յանձնաժողովի վրայ պարտք է դրուած վերջնականապէս մշակել դպրոցի կանոնադրութեան ծրագիրը՝ համաձայն կտակի և ունեցած այլ դոկումենտների ու նիւթերի, և արդէն մշակած ու կազմուած ուսման ծրագրի հետ միասին ներկայացնել Հոգ. Խ-դի քննութեան ու հաստատութեան, որից յետոյ կներկայացնուի ի վերջնական վաւերացումն Ամենայն Հայոց Կաթողիկոսի։

——

Հոգ. Խ-դը ի նկատի ունենալով, որ դպրոցի կրօնուսոյց Արսէն աւ. ք. Բագրատունին՝ ուսուցչութեան պաշտօն վարելով ամբողջ 35 տարի դպրոցում՝ ծերութեան և հիւանդութեան պատճառով այլևս անկարող էր շարունակել իր պաշտօնը, որ նա եղել դպրոցի ժրաջան և երախտաւոր աշխատաւորներից մինը և իր օգտակար գործունէութեամբ նուիրուած է եղել դպրոցի շահերին՝ որո-

շեց տալ նրան հանգստութեան արձակուրդ, նշանակելով նրան, բացի իր արդէն ստացած կենսաթոշակից (120 ր. տարեկան), այլևս 380 բուբլի, ուրեմն ընդամենը 500 ր. կենսաթոշակ ցկեանս։

— —

Հոգաբարձական Խորհուրդը պատգամաւորութեամբ մասնակցել է հայ գրող Շիրվանզադէի և Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Մ. Ասլիանի յօբելեաններին։ Նոյնպէս արժանաւոր յարգանք է ընծայել դպրոցի նախկին հոգաբարձու Գաբրիել Երեցփոխեանի յիշատակին՝ մասնակցելով ամբողջ կազմով նրա յուղարկաւորութեանը և թաղմանը։

1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.

Մ.-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇԻՒԸ

Մ Ո Ի Տ Ք	Ղ ա խ ա հ ա			
§ 1				
Դպրոցական քարվանսարայից. .	25472	—	—	—
§ 2				
Դրամագլխի (90.000 ր. նոմ. արժ. 4% պետ. բենատ) %% .	3562	—	—	—
§ 3				
Ուսման վարձ աշակերտուհիներից	2500	—	—	—
§ 4				
Աշակերտուհիների պատրաստած ձեռագործների վաճառումից . .	100	—	31634	—
Փոխադրելի . . .	—	—	31634	—

Հիշ 1910 թ. սեպտ.— 1911 թ. սեպտ. Ելք

	§ 1				
	ԴՊՐՈՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ				
1	Ռոճիկ տեսչին	2000	—		
2	„ վերակացուհիներին. . .	1400	—		
3	„ Մանկ. ժ. ք.	100	—		
4	„ գրադարանապետին. . .	100	—		
5	„ դասագին՝ 50 ր.×303*).	15050	—		
6	„ գրաւորների վարձ. 5×148	740	—		
7	„ բժշկին	650	—		
8	„ բժշկի օգնականին . . .	300	—		
9	„ Հոգ. Խ-դի և տեսչի քարտ.	480	—		
10	„ հաշուապահին	240	—		
11	„ ծառաներին (4 հոգի) .	996	—		
12	„ դռնապահին	240	—	22296	—
1	Ֆիզիքական կաբինէտ.	400	—		
2	Գրադարան	200	—		
3	Ուսումնական պիտոյքներ . . .	200	—		
4	Ձեռագործի նիւթեր	100	—		
5	Հանդէսներ, երեկ., էքսկուրսիա.	100	—		
6	Դեղորայք և բժ. օգնութիւն . .	100	—		
7	Կահ-կարասու վերանորոգութ. .	100	—		
8	Վառելիք և լուսաւորութիւն . .	400	—		
9	Ջուր	150	—		
	Փոխադրելի . . .	1750	—	22296	—

*) 2 դասը ձրի պարապելու է տեսուչ պ. Ստ. Մալխասեանցը։

Մ Ո Ի Տ Ք	Ն ա խ ա հ ա		
Փոխադրուած . . .	—	—	31634 —
Փոխադրելի . . .	—	—	31634 —

Հիշ	1910 թ. սեպտ. — 1911 թ. սեպտ.			ելք	
	Փոխադրուած . . .	1750	—	22296	—
10	Դպրոցի շինութեան մանր վերանորոգութիւններ . . .	100	—		
11	„ շինութեան ապահովագրութիւն	133	32		
12	Շարժական կայքի ապահովագրութիւն	33	75		
13	Դիւանական և տպագր. ծախսեր	120	-		
14	Անակնկալ ծախսեր.	100	—		
15	Դատարանական ծախսեր . . .	100	—		
16	Մանր ծախսեր	100	—		
17	190⁸/₉ թ. պարտքեր	325	80		
18	Հանդուցեալ Իզմիրլեան կաթող. անուան որդեգրուհուն	30	—	2792	87
	§ 2				
	ԲԱՐՎԱՆՍԱՐԱՅԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ				
1	Ռոճիկ կառավարչին	1100	—		
2	„ 2 դռնապահին.	480	—		
3	„ աղբ թափող մշակին . .	72	—		
4	Տուրքեր (պետ., հողային և քաղ. գնահատմ.).	3100	—		
5	Վառելիք և լուսաւորութիւն . .	50	—		
6	Ջուր.	130	—		
7	Շինութեան մանր վերանորոգ.	300	—		
8	„ ապահովագրութիւն .	400	—		
	Փոխադրելի . . .	5632	—	25088	87

Մ Ո Ի Տ Բ	Հ ա խ ա հ ա
Փոխադրուած . . .	— — 31634 —
Փոխադրելի . . .	— — 31634 —

Հիշ	1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.			ելք	
	Փոխադրուած . . .	5632	—	25088	87
9	Մանր ծախսեր	50	—	5682	—
	§ 3				
	ՆՊԱՍՏՆԵՐ և ԿԵՆՍԱԹՈՇԱԿ				
1	Թիֆլիսի ս. Ստեփանոսի կուս. վանքին	300	—		
2	Ախալքալաքի հայոց եկ.-ծխ. դպ. նպաստ	150	—		
3	Կրօնուսոյց Արսէն աւ.-ք. Բագրատ. (կենսաթ.) . . .	120	—	570	
		—	—	31340	87
	Մուտքի և ելքի տարբերութիւն .	—	—	293	13
		—	—	31634	—

Հ II 3250

Ա. Կ Տ Ի Ի				Հաշուեկշիռ	
1	Դրամարկղ				
	մնացորդ ս. թ		348 39		
2	Շարժական կայք				
	մնացորդ ս. թ		7873 17		
3	Դասական պիտոյքներ				
	մնացորդ ս. թ		2113 26		
4	Կրպակակալների հաշիւ				
	մնացորդ ս. թ		1633 25		
5	Աւանների հաշիւ				
	մնացորդ ս. թ		190 —		
6	Անշարժ կայք				
	մնացորդ ս. թ.				
	ա. քարվանսարա. .	400000 —			
	բ. դպ. շինութիւն. .	50000 —			
	գ. նոր. կրպակներ. .	7060 91	457060 91		
7	4 0/0 պետակ. բենտա				
	մնացորդ ս. թ. . . .	90000 —	— —		
	0/0 0/0 առ 1 սեպտ. .	855 —	90855 —		
8	Թիֆլիսի Առևտր. Բ. ընթ. հաշիւ				
	մնացորդ ս. թ		1897 82	561971	80
			—	561971	80

	...ան 1-ն սեպտ. 1910 թ.			ՊԱՍՍԻՒ	
1	Պարտատէրեր մնացորդ ս. թ.	351	25	—	—
2	Կրպակակալների հաշիւ մնացորդ ս. թ.	1482	47	—	—
3	Կառավարչի հաշիւ մնացորդ ս. թ.	86	85	—	—
4	Աւանների հաշիւ մնացորդ ս. թ.	14	91	1935	48
5	Դրամագլուխ մնացորդ ս. թ.	—	—	560036	32
		—	—	561971	80

Մ Ա Ի Տ Բ	Զուտ դպրոցական մուտքի			
1	Ուսման վարձ՝ աշակերտուհիներից	—	—	2323 25
2	Փոխադրվում են մտից և ելից ընդհանուր հաշիւը՝ Զուտ դպրոցական ծախսերը. .	—	—	20772 76
		—	—	23096 01

...ի եկի հաշիւ 1910 թ. սեպ.—1911 թ. սեպ. Ե Լ. Բ

1	Ռոճիկ տեսչին.	2000	04		
2	„ վերակացուհիներին (3 հ.)	1399	92		
3	„ Մանկ. ժող. քարտ. . .	99	96		
4	„ գրադարանապետուհուն .	91	63		
5	„ դասավճար	15063	01		
6	„ գրաւորների վարձատրութիւն	739	60		
7	„ բժշկուհուն և օգնականին	989	92		
8	„ ծառաներին (4 հոգի). .	986	—		
9	„ դռնապահին.	240	—	21610	08
	———				
1	Ուսումնական պիտոյքներ . . .	48	18		
2	Հանդուցեալ Իպմիրլեան կաթող. անուան որդեգր. . . .	27	56		
3	Երեկոյթներ, հանդէսներ և էքսկուրսիա (Անի)	307	33		
4	Դեղորայք և բժ. օգնութիւն . .	84	97		
5	Վառելիք և լուսաւորութիւն.	527	—		
6	Ջուր.	58	53		
7	Շինութեան մանր վերանորոգ. .	148	70		
8	„ ապահովագրութիւն 1910 թ. յունվ.—սեպ. 1-ը	82	24		
9	Շարժական կայքի ապահ. 1911 թ. մարտի 10—սեպ. 1-ը	15	94		
10	Կահ-կարասու վերանորոգ. . .	27	75		
11	Մանր ծախսեր	157	73	1485	93
		—	—	23096	01

ՄՈՒՏՔ Դիւանական ծախսերի

	Փոխադրվում են մտից և ելից ընդհանուր հաշիւը դիւանական բոլոր ծախսերը.	—	—	1083	32
		—	—	1083	32

ՄՈՒՏՔ Նպաստների եւ կենսաթոշակի

	Փոխադրվում են մտից և ելից ընդհանուր հաշիւը նպաստներն ու կենսաթոշակը.	—	—	570	—
		—	—	570	—

ՄՈՒՏՔ Դրամագլխի %-ի

1	90000 ր. նոմին. արժ. 4% պետ. ընտ. գուտ %%.	1345	50	—	—
2	Նոյն 90000 ր. 4% պ. ր. փոխարկուած 96000 ր. Թիֆլ. քաղ. վ. ընկ. 5% օբլիգ. 1911 թ. յունվ.—սեպտ. 1-ը գուտ %%.	1849	29	3194	79
		—	—	3194	79

Հաշիւ	1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.				Ե Լ Բ
1	Հոգ. Խ-դի և տեսչի քարտուղարին	445		—	—
2	„ „ հաշուապահին	220	—	—	—
3	Գրասենեկային և տպարանական ծախսեր	418	32	1083	32
		—	—	1083	32

Հաշիւ	1910 թ. սեպտ. - 1911 թ. սեպտ.				Ե Լ Բ
1	Թիֆլիսի ս. Ստեփանոսի կուս. վանքին	300	—		
2	Ախալքալաքի հայոց եկեղեց.-ծխ. դպրոցին	150	—	—	
3	Կրօնուսոյց հանդ. Արս. աւ. Բ. Բագրատունեան (կենսաթ. . . .	120	—	570	—
			—	570	—

Հաշիւ	1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.				Ե Լ Բ
	Փոխադրվում է մտից և ելից ընդհանուր հաշիւը ստացուած բոլոր %-ը	—	—	3194	79
		—	—	3194	79

ՄՈՒՏՔ — Անակնկալ մուտքի եւ ելքի

1	Տիկ. Վառվառա Բանանեանից՝ Ուսուցչական թոշակարկղի ֆոնդի համար նուէր.	500	—		
2	Նոյն տիկնոջից աշակերտուհիների զուարճութեան համար	100	—		
3	Նուէր Հոգ. Խ-դի անդամներից դպրոցական հանդէսի համար. .	22	—		
4	Աշակերտական հանդէսի համար օր. Խունունցից	5	—		
5	Զանազան անձանց (կրպակակալներ և կառավարչի) հաշիւներով գրվում են յօգուտ դպրոցի . .	158	30		
6	Կրպակ. Շաբանովից նուէր չք. աշ.	250	—	1035	30
	Փոխադրվում են մուտից և ելից ընդհանուր հաշիւը				
	Բոլոր անակնկալ ծախսերը. . .	—	—	1129	81
		—	—	2165	11

ՄՈՒՏՔ — Տոկոսաբեր թղթերի

	4% պետակ. բենտ. նախկին հաշուէկշռով նոմինալ արժողութիւնը	—	—	90000	—
		—	—	90000	—

նալիր 1910 թ. սեպտ. — 1911 թ. սեպտ.

	Դուրս են գրվում—				
1	Զանազան անձանց անյուսալի ապառիկները	984	46		
2	Նախկին տեսուչ պ. Լ. Սարգսեանին՝ դատարանի որոշմամբ. . .	1000	—		
3	Միանուագ նպաստներ	125	—		
4	Իզմիրլեան կաթող. թաղման ներկայացուցչի ճանապարհածախս .	27	—		
5	Ղ. Աղայեանի յուշարձանի համար	25	—		
6	Այլ և այլ հոգեհանգիստների ծախսեր	3	65	2165	11
		—	—	2165	11

...ուրսերի տարբերությունը

	Վաճառուած են *) 90000 ռուբ. նոմ. արժ. 4% պետ. ընտ. զանազան կուրսերով	85300	—		
	Փոխադրվում է մտից և ելից ընդհանուր հաշիւը կուրսի տարբերութիւնը.	4700	—	90000	—
		—	—	90000	—

*) Հոգ. Խ-դի որոշմամբ (1910 թ. նոյեմ. 2-ի նիստ, արձ. № 9, 1911 թ. յունվ. 19-ի և 26-ի նիստեր, արձ. №№ 19 և 20) գնուած են Թիֆլ. Քաղ. Վ. Ընկ. 5% օբլ. 96000 ր. նոմ. արժողութեամբ։

ՄՈՒՏՔ — Քարվանսարայի

1	Դպրոցապատկան քարվանսարայից ստացուած է	—	—	25406	67
		—	—	25406	67

ՄՈՒՏՔ — Մտից եւ ելից

1	Դպրոցապատկան քարվ. զուտ արդիւնքը	19858	11	—	—
2	Դպրոցի դրամագլխի զուտ %-քը	3194	79	23052	90
	Դեֆիցիտ ուս. տարում	—	—	5202	99*)
			—	28255	89

*) Իսկական դեֆիցիտ պէտք է համարել 502 ր. 99 կ., որովհետեւ 4700 ր. տոկոսաբեր թղթերի կուպոնների տարբերութիւնն է, որ առաջ է եկել նոմինալ արժողութեամբ 90000 ր. 4% պետ. բենտ. դրամի վերածելիս։ 502 ր. 99 կոպ. անյուսալի ապառիկներ են՝ մնացած 1906 թ.։

հաշիւ 1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.

				ելք	
1	Ռոճիկ կառավարչին	1080	—		
2	„ երկու դռնապահին . . .	465	—		
3	„ աղբ թափող մշակին . .	72	—		
4	Տուրքեր (պետ. հող. և քաղ. գնահատման)	3399	09		
5	Շինութեան մանր վերանորոգութիւն.	108	98		
6	Շինութեան ապահովագրութիւն 1910 թ. յունվ.—սեպտ. . . .	84	76		
7	Ջուր.	177	97		
8	Վառելիք և լուսաւորութիւն . .	61	04		
9	Մանր ծախսեր (գերբովից մարկա և այլն)	99	72	5548	56
	Փոխադրվում է մտից և ելից ընդհ. հաշիւը զուտ մնացորդը	—	—	19858	11
		—	—	25406	67

ընդհանուր հաշիւ

				ելք	
1	Դպրոցական ծախսեր	20772	76		
2	Դիւանական ծախսեր	1083	32		
3	Նպաստներ և կենսաթոշակ . .	570	—		
4	Անակնկալ ծախսեր.	1129	81		
5	90000 ր. նոմ. արժ. 4% պետ. բենտ. կուրսի տարբերութիւնը .	4700	—	28255	89
		—	—	28255	89

ՄՈՒՏՔ				Ընդհանուր հաշիվ	
1	Դպրոցապատկան քարվանսարայի	25406	67		
2	Դրամագլխի զուտ %-ք	3194	79		
3	Ուսման վարձ աշակերտուհիներից	2323	25		
4	Անակնկալ մուտքեր (նուէրներ և այլն).	1035	30	31960	01
	Դեֆիցիտ ուս. տարում	—	—	502	99
				32463	—

դրամարկղով 1910 թ. սեպտ.—1911 թ սեպտ. ելք

1	Դպրոցական ծախսեր	23096	01		
2	Դիւանական „	1083	32		
3	Նպաստներ և կենսաթոշակ . .	570	—		
4	Բարվանսարայի ծախսեր. . . .	5548	56		
5	Անակնկալ ծախսեր.	2165	11	32463	—
		—	—	32463	—

Ա.	ԿԱՏԻ	Հաշուեկշիռ			
1	Ուսուցչական թոշակարկղի ֆոնդ (նուէր տիկ. Վ. Բանանեանից .	500 *)	--		
2	Շարժական կայք—մնացորդ . .	7903	07		
3	Գրքեր (միայն $19^{10}/_{11}$ ուս. տ)—մնացորդ.	165	90		
4	Դասական պիտոյքներ — մնացորդ	2113	26		
5	Կրպակակալների հաշիւ— „	99	18		
6	Աւանների հաշիւ „	80	—		
7	Ապահովագրութիւն դպր. շէնքի 31-ն յունվ. 1912 թ.	41	11		
8	Ապահովագրութիւն քարվ. շէնքի 31-ն յունվ. 1912 թ.	60	54		
9	Ապահովագրութիւն դպր. շարժ. կայքի 310-ն մարտի 1912 թ. .	17	81		
10	Նպաստ Ախալքալաքի ծխ. դպր. ի հաշիւ $19^{11}/_{12}$ ուս. տ. . . .	150	---		
11	Անշարժ կայք ա. Յովհաննեան քար. Սիոնի փողոցում . 400000 — բ. Նոր կրպակներ քարվ.-կից, Կոլոկոլնիյ 7060 91 գ. Դպրոցի շէնք Բեռուսովսկիյ № 14 . . 50000 —	457060	91		
12	96000 բուբլի նոմ. արժ. Թիֆլիսի Քաղ. Վ. Ընկ. 5% օբլիգացիաներ (121 թերթ.—71-ը 1000-ական, 50-ը 500-ական բուբլանոցներ, դպրոցի անունով պահվում են Թիֆ. Քաղ. Վ. Ընկ. Բանկ. անդորրագրեր №№ 7 և 8)	85440	—		
13	Թիֆլ. Առևար. Բ. ընթ. հաշիւ—մնացորդ.	2097	82	555729	60
		—	—	555729	60

*) Հոգ. Խ-դի 1911 թ. ապր. 21-ի նիստի (արձ. № 3) որոշմամբ յիսուսուչ պ. Ստ. Մալխասեանցին, որպէս գանձապահի Հոգ. Խ-դից հաստատուած արանի, %-ով շրջանառութեան մէջ գնելու՝ մինչև թոշակարկղի կանոնագրութիւն ստանալը։ %%-ը գնալու են յօգուտ թոշակարկղի։

տու 1-ն սեպտ. 1911 թ. ՊԱՍՍԻՒ

1	Կրպակակալների հաշիւ—մնացորդ	626	62	—	—
2	Կառավարչի հաշիւ— „ . .	269	65	896	27
3	Դրամագլուխ—մնացորդ	—	—	554833	33
		—	—	555729	60

շեալ գումարը, ստացման օրից (1911 թ. յունիսի 6-ին), յանձնուած է դպրոցի ուսած (1911 թ. հոկտ. 12-ի նիստ, տրձ. № 5) ուսուցչական փոխատու գանթեան նախագծի Բարձրագոյն Հոգևոր Իշխանութիւնից պատշաճաւոր հաստա-

ՄՈՒՏՔ

Համեմատա

1909 թ. սեպտ.—1911 թ.

ԵԿԽԵ

		1909—1910 ռուս. ռ.				1910—1911 ռուս. ռ.				ԵՎԽԵՎԱՏ-ՇԻՒ 1911—1912	
		Նախահաշիւ		Ճիշտ ստացուած		Նախահաշիւ		Ճիշտ ստացուած			
		Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.
1	Դպրոցական քարտանասարայից. . . .	22000	—	22642	19	25472	—	25406	67	26444	—
2	Դրամագլխի %%.	3562	50	3461	70	3562	—	3194	79	4560	—
3	Ուսման վարձ. աշակերտուհիներից . .	2300	—	1457	85	2500	—	2323	25	3000	—
4	Ձեռագործի վաճառումից.	—	—	—	—	100	—	—	—	100	—
5	Անակնկալ մուտք. .	—	—	299	17	—	—	1035	30	250	—
		27862	50	27860	74	31634	—	31960	01	34354	—

Ա. Ա. Ն. Ա. Ն. Ա. Ն

Դպրոցի 96000 ր. նոմինալ արժողության Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերության 5% լիտերային օբլիգացիաների № №

71 *ՀԱՏ* 1000-*ԱԿԱՆ ՐՈՒԲԼԱՆՈՑ*

15.398, 15.399, 15.400, 15.401, 15.402, 15.403, 15.404, 15.405, 15.406, 15.407, 15.408, 15.409, 15.410, 15.411, 15.412, 15.413, 15.414, 15.415, 15.416, 15.417, 15.418, 15.419, 15.420, 15.421, 15.422, 15.423, 15.424, 15.425, 15.426, 15.427, 04.166, 14.248, 14.678, 14.966, 14.967, 14.968, 14.969, 15.106, 15.107, 15.108, 15.109, 15110, 15.112, 15.113, 15.114, 15.115, 15.116, 15.117, 15.118, 15.121, 15.122, 15.123, 15.124, 15.125, 15.126, 15.127, 15.253, 15.254, 15.376, 15.428, 15.429, 15.430, 15.431, 15.432, 15.433, 15.434, 15.435, 15.440, 15.441, 15.442, 15.458:

50 *ՀԱՏ* 500-*ԱԿԱՆ ՐՈՒԲԼԱՆՈՑ*

05.389, 05.969, 06.077, 06.078, 06.079, 06.080, 06.096, 06.097, 06.100, 06.104, 06.244, 06.245, 06.246, 06.247, 06.249, 06.250, 06.251, 06.252, 06.253, 06.254, 06.539, 7601, 7602, 7603, 7604, 9448, 9449, 9450, 9451, 9641, 9687, 9688, 9737, 9750, 9751, 9752, 9753, 9754, 9755, 9756, 9757, 9758, 9759, 9760, 9761, 9762. 9763, 9764, 9765, 9766:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ

19¹⁰|₁₁ ուսումն. տարուայ

Ուսումնական տարուայ սկզբին, վերաքննութիւններից և նորեկների ընդունելութիւնից յետոյ, աշակերտուհիների ընդհանուր թիւն էր 343, որոնք զետեղուած էին եօթը հիմնական և երեք զուգընթաց դասարաններում այսպէս.

Ա. դ. 46, Բ. դ. 40, Գ. հ. 28, Գ. զուգ. 29, Դ.հ. 38, Դ. զ. 37, Ե. հ. 31, Ե. զ. 33, Զ. դ. 36, Է. դ. 25։

Յունուարի սկզբին քննութեամբ ընդունուեցին դարձեալ 2 աշակերտուհի, Գ դասարանում, որով տարուայ ընթացքում նրանց բարձրագոյն թիւը եղաւ 345 հոգի։

Տարվայ ընթացքում զանազան պատճառներով հեռացել են դպրոցից 15 հոգի, (որից 3-ը վախճանուած)։ Այնպէս որ տարուայ վերջին աշակերտուհիների ընդհանուր թիւն էր 330։

Ուսումը դպրոցում սկսուեց սեպտեմբերի 2-ին և շարունակվեց մինչև մայիսի 20 ը։ Տարուայ ընթացքում դասարանական պարապմունքներ եղել են 178 օր։

Տարեկան հարցաքննութիւնից (Է. դասարանում) և ստուգութիւններից յետոյ (միւս դասարաններում՝ ուսարտական առարկաներից) աշակերտուհիների յառաջադիմութիւնն արտայայտուեց հետևեալ կերպով.

Դասա.	Թիւ	փոխադր.	վերաքնն.	մնում են	արձակվ.
Ա.	42	18	6	12	6
Բ.	39	22	11	4	2
Գհ.	30	17	6	7	--
Գզ.	27	16	6	3	2
Դհ.	36	17	12	5	2
Դզ.	37	24	5	8	—
Եհ.	30	13	7	10	—
Եզ.	31	19	9	3	—
Զ.	33	14	12	7	—
Է.	25	աւարտ. 25	—	—	—
Գումար	330	185=56%	74=22,4%	59=18%	12=3,6%

Այս ցանկի թուանշանների մասին հարկաւոր է մի քանի բացատրութիւն տալ։

Տարեկան փոխադրութիւնների հարցով զբաղուելիս՝ Մանկ. ժողովը ի նկատի առաւ, որ շատ աշակերտուհիներ, որոնք մի քանի տարիկայից թոյլ թուանշան ունէին և պէտք է վերաքննութիւն ստանային՝ հիւանդոտ և վատառողջ էին։ Այսպիսիները վերաքննութիւն ստանալով՝ ամառուան հանգիստը, որ անհրաժեշտ էր կազդուրուելու և բժշուելու համար՝ պէտք է գործ դնէին սովորելու. իսկ այս մտաւոր աշխատանքն ու վիճակի անորոշութեան յուզմունքը աւելի ևս պէտք է քայքայէին նրանց առողջութիւնը, և նոյն-իսկ բաւարար վերաքննութեան դէպքում էլ մենք հէնց տարուայ սկզբից պէտք է ունենայինք թուլակազմ և հիւանդ աշակերտուհիների զգալի տոկոս դլխաւորապէս միջին և բարձր դասարաններում, որ պիտի ազդէր դասարանների ընդհանուր պարապմունքների և յառաջադիմութեան վրայ։ Այս պատճառով Մանկ. ժողովը որոշեց՝ այդպիսիներին չտալ վերաքննութիւն, այլ որոնց հնարաւոր է զիջում անել և 1—2 նոյն-իսկ աւելի թոյլ թուանշաններով փոխադրել. իսկ որոնց չէր կարելի զիջում անել՝ նրանց թողնել դասարաններում։ Այս պատ-

ճառով վերաքննուողների թիւը համեմատաբար փոքր է, որի փոխարէն աւելացել են փոխադրուողների և մնացողների թուերը։

Նախընթաց $19^{09}/_{10}$ ուս. տարում Ե. դասարանի աշակերտուհիների մաթեմատիկայի դասընթացը շատ յետ էր մնացել առարկայի ուսուցչի հիւանդութեան և մահուան պատճառով։ Նրանք փոխադրուած լինելով Զ. դասարան՝ անպատրաստ էին այս դասարանի դասընթացն անցնելու։ Չնայելով որ տարուայ ընթացքում ձեռք առնուեցին արտակարգ միջոցներ, օր. Ծննդեան և Զատիկական արձակուրդներին նրանց համար մաթեմատիկայից դասեր սահմանուեցին, տարուայ երկրորդ կէսից մի լրացուցիչ դաս սահմանվեց մաթեմատիկայից՝ այնու ամենայնիւ անկարելի եղաւ լրացնել դասընթացը. ուստի դասարանը Մանկ. ժողովի կողմից, առարկայի ուսուցչի վկայութեամբ, ճանաչուեց անպատրաստ մաթեմատիկական երկու առարկայից (հանրահաշուից և երկրաչափութիւնից)։ Այսպիսի պայմանում դասարանի մեծամասնութիւնը պէտք է թողնուէր նոյն դասարանում, որ թէ անարդար կլինէր աշակերտուհիների նկատմամբ, քանի որ նրանց յեռամնացութեան պատճառն իրանք չէին, և թէ անգործնական։ Ուստի Մանկ. ժողովը որոշեց՝ այդ երկու առարկայից տարեկան թուանշան չդնել և ինկատ չառնել փոխադրութեան հարցում, այլ առաջիկայ տարում ($19^{11}/_{12}$) լրացուցիչ դաս սահմանել Է. դասարան փոխադրվածների համար՝ մաթեմատիկայի թերին լրացնելու համար՝ որքան հնար լինի։

Առաջին դասարանից արձակուածներից երկուսը արձակուել են՝ իբրև երրորդ տարին նոյն դասարանում մնացողներ, իսկ չորսը բացարձակ անընդունակութեան և մտաւոր անկարողութեան պատճառով։

Տարեկան հրապարակական հարցաքննութիւն կատարուեց եօթներորդ դասարանում՝ աւարտողների համար և վեցերորդում՝ եկեղեցական պատմութիւնից։ Միւս դասարաններում կատարուեցին դասարանական ստուգութիւն-

ներ աւարտական առարկաներից՝ տեսչի և մի-երկու ուսուցչի ներկայութեամբ. իսկ շարունակուող առարկաներից փոխադրութիւնները կատարուեցին համաձայն ուսուցիչների տարեկան թվանշանների։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Տարուայ ընթացքում պախարակելի վատ վարք չէ նկատուել աշակերտուհիների մէջ, և բոլորը տարեկան վարքից ստացել են «5»։ Նկատուել են աշակերտութեան յատուկ կարգապահութեան խախտումներ—թելադրել, դասի ժամանակ խօսել, դասերին ուշանալ և այլն, որոնց դէմ ձեռք են առնուել միջոցներ Մանկ. ժողովի և վարչութեան կողմից։

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացակայութիւնների թիւը շատ մեծ է եղել հաշուետուութեան տարում։ Ցուցակագրուած 334 աշակերտուհիների վրայ գալիս է 19334 դասի բացակայութիւն, կամ իւրաքանչիւր աշակերտուհու վրայ միջին թուով մօտ 58 դասի բացակայութիւն։

Այս զգալի թիւը բացատրւում է հետեւեալ պատճառներով։ Նախ՝ աշակերտուհիներից ոմանք երկարատև հիւանդութեան ենթակայ են եղել, որի պատճառով բացակայել են անընդհատ 2—3 ամիս, տալով 200—300 բացակայութիւններ, որոնք զգալի կերպով ազդել են ընդհանուր տոկոսի վրայ։ Երկրորդ պատճառը՝ ընտանեկան և տնտեսական պայմաններն են. տան գործերի մէջ ծնողներին օգնել, հիւանդներին խնամել, վայելուչ զգեստի, կօշկի, ուսումնական պիտոյքների պակասութիւն և այլն։

ԸՆԹԱՑԱՌԱՐՏՆԵՐԸ

Հաշուետուութեան տարում դպրոցի լիակատար դասընթացն աւարտեցին 25 աշակերտուհի. սրանք են.

1. Աթոյեան Աննայ
2. Անանեան Հայկանդուխտ
3. Անդրէասեան Արուսեակ
4. Աւետիսեան Մարիամ
5. Բաբոյեան (Ճանճուլճեան) Հայկանուշ
6. Բայանդուրեան Արուսեակ
7. Գաբրիէլեան Սրբուհի
8. Գօղալեան Երանեակ
9. Գրիգորեան Աննա
10. Գրիգորեան Աստղիկ
11. Գրիգորեան Վարդուհի
12. Դէմուրեան Աշխէն
13. Իշխանեան Մարիամ
14. Ղամբարեան Հայկանուշ
15. Հալաբեան Մարիամ
16. Մարտիրոսեան Սիրանոյշ
17. Միրիմանեան Մանեակ
18. Յովհաննիսեան (Թօխեան) Վարդանոյշ
19. Պօյոյեան Վարսենիկ
20. Չիլինեան Կատարինէ
21. Սահակեան Մարիամ
22. Սանդրոսեան Աննա
23. Սարգսեան Սահականոյշ
24. Տէր-Անդրէասեան Աշխէն
25. Տէր-Աստուրեան Կատարինէ

(Սրանցից 6 հոգի դպրոցներում վարժուհու պաշտօն ստացան, 7 մասնաւոր դասեր են տալիս. միւսների մասին տեղեկութիւններ պակասում են)։

Ուսուցչական կազմը 19¹⁰/₁₁ ուս. տարում.

ԱԶԳԱՆՈՒՆ ԵՒ ԱՆՈՒՆ	Յուսուցչի անվանիկը	Ո՞րտեղ է սովորել	Ինչ առարկաներ է աւանդում եւ ո՛ր դասարաններում	Դասաւանդման ամիսներ	Ինքնուրոյն դասաւանդած տարի	Ինքնուրոյն դասաւանդած տարի
Աղաջանեան Արմենակ	1	Օդեսս. համալսարան	Ընդհ. պատմ. Գ—Դ	8	3	3
Բաբասեան Յարութիւն	1	Գէորգեան ճեմարան.	Հայերէն Ա—Գ	22	—	1
Բագրատունի Արսէն քնոյ.	34	Խալիպեան ուս.	Կրօն, Քրիստ. վարդ. Ա—Դ	10	91	1
Բէժանեան Հեղինէ	1	Գիմնազ. և ժընեւի համ.	Ֆրանսերէն Դ—Է	12	2	4
Գիւզալեան Տիգրան	1	Պետերբուրգի ճեմ.	Առողջապահութիւն Է	3	2	—
Դէմիրճեան Դիրենիկ	1	Ներս. դպր. և ժընեւի համալսարանում	Հայերէն և նոր մատենագր. Դ—Է	22	3	15
Կանայեան Խաչատուր	1	Գէորգեան ճեմարան.	Պատմ. Հայոց և Աշխ. Հայ. Դ—Է	16	17	11
Ղարաճեան Եղիսաբեթ	10	Արհեստաւորաց դպր.	Ձեռագործ Ա—Գ	8	7	—
Մալխազեան Արշակ	1	Մոսկվայի համալս.	Ընդհանուր պատմ. Ե—Է	8	5	2
Մալխասեանց Ստեփան	1	Պետերբ. համալս.	Հայերէն գրաբար և հին տառ Ե—Է	10	14	5
Մամիկոնեան Թագուհի	1	Գիմնազիա և Մոսկվ. բարձր. մանկ. կուրս.	Ռուսերէն և Ռուս. աշխարհագր. Դ—Ե	22	27	1

Մելիք-Զհանեան Յովսէփ	1	Ուսուցչական սեմին.	Ռուսերէն Ա.—Բ	10	30	1
Մելիք-Յոհանջանեան Լ.	4	Խարկովի համալս.	Ռուս. և գրակ., ռուս. պատմ. Զ—Է	13	11	—
Մինասեան Արշակ քհնյ.	11	Ներս. դպր. և Գերմ. Ատուաձար. դասընթ.	Եկ. պատմ. (Ե—Զ), Հայոց պատմ. (Ա—Բ), Բիբլիատ. վարդ. Դ դ.	12	7	1
Մնացականեան Շուշանիկ	10	Գիմնազիա	Թուաբանութիւն Ա, Բ, Դ, Դզ.	14	—	7
Մուրադեան Կատարինէ	24	Գիմնազիա	Թուաբանութիւն Գ, Դզ.	6	—	34
Յարութիւնեան Խաչակ	1	Ներս. դպր. և Իէնա ի համալսարանում	Հոգեբանութիւն Է	3	1	—
Յովսէփեան Գէորգ	1	Թիֆ. գեղարուեստ. դպ.	Նկարչութիւն Ա.—Գ	8	19	—
Շաղդաեան Մարիամ	1	Թ.Հ.Բ.Ը. կար ու ձեի ուսումնարանում	Ձեռագործ Դ—Զ	10	3	—
Սարգսեան Նիկողայոս	1	Ցիւրիխի համալս.	Բնագիտ. և աշխարհագր. Ա.—Դ	28	14	—
Տէր-Գրիգորեան Հայկանոյշ	4	Գիմնազիա	Ռուսերէն Գ. Դզ.	10	88	2
Տէր-Յովսէփեան Արշակ	1	Օդես. խմբապետակ.-եկ. երգեց. կուրսեր	Երաժշտ. դաս. և խմբապետութ.	14	14	1
Տէրեան Կարապետ	2	Գ. ճեմ., լս. Սորբոն.	Հանրահաշիւ (Դ, Դզ), Ֆիզիքայ	20	1	—
Տիգրանեան Պետրոս	2	Խարկովի համալս.	Հանրահաշիւ (Ե—Է) և երկրաչափ.	19	—	1

Վերակացութեան պաշտօն կատարում էին—օր. Կ. Մուրադեան ուսուց. վերակացուհի, տիկ. Ս. Դաւթեան (նոյն և բժշկի օգնական) և օր. Ա. Շահիկեան։

Դպրոցի բժիշկն էր տիկ. Ամբրումեան—Մելիքեան։

Տարուայ ընթացքում դպրոցից հեռացան—Մալխաղեան Արշակ և Տէր-Գրիգորեան Հայկանոյշ, առաջինը՝ ուրիշ տեղ պաշտօն գտնելով, երկրորդը՝ հիւանդութեան պատճառով։ Առաջինի դասերը յանձնուեցին Ա. Աղաջանեանին, երկրորդի դասերը՝ օր. Շահիկեանին (ձրի)։

Բացի ցուցակով նշանակուած դասերից՝ ուսուցիչներից ոմանք ձրիաբար յանձն առան լրացուցիչ դասեր և դասարանական պարապմունքներ։ Այսպէս՝ պ. Դէմիրճեան, շաբաթական մի դաս Է դասարանում։

Ստ. Մալխասեանց շաբաթական մի ժամ հինգերորդ և մի ժամ վեցերորդ դասարաններում. Յովսէփեան Գ. շաբաթական մի ժամ Դ—Զ. դասարաններում, Ա. Տէր-Յովսէփեան լրացուցիչ խմբական երգեցողութիւններ գլխաւորապէս տօն օրերին, Կ. Տէրեան և օր. Հ. Բէժանեան՝ Ծննդի և Զատկուայ տօներին Զ. դասարանում։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Հաշուէտուութեան տարուայ ընթացքում Մանկավարժական Խորհուրդը ունեցել է 30 նիստ։ Նիստերին բացակայել են—պ.պ. Բաբասեան, Կանայեան, օր. Մուրադեան, Տէրեան, Տիգրանեան՝ 1 անգամ. Ստ. Մալխասեանց, օր. Մնացականեան, պ. Սարգսեան՝ 2 անգամ. տ. Մամիկոնեան, պ. Յովսէփեան, օր. Շաղդամեան՝ 3 անգամ. պ.պ. Ա. Մալխազեան, Մելիք-Յոհանջանեան, Ա.ք. Մինասեան՝ 5 անգամ. պ.պ. Մելիք-Զհանեան, Տէր-Յովսէփեան, օր. Շահիկեան՝ 6 անգամ, տիկ. Դաւթեան՝ 7 անգամ. պ. Գիւզալեան 11 անգամ, տիկ. Տէր-Գրիգորեան՝ 13 անգամ, պ. Յարութիւնեան՝ 21 անգամ, հ. Ա. Բագրատունի՝ 25 անգամ։

Օր. Շահիկեանի, տիկ. Դաւթեանի, Տէր-Գրիգորեանի և հ. Բագրատունու բացակայութիւնները հետևանք են հիւանդութեան, պ.պ. Յարութիւնեան և Գիւզալեան, իրանց դասերի քչութեան պատճառով, թոյլտուութիւն էին ստացել բոլոր նիստերին չգալու։

Մանկավարժական Խորհուրդը բացի ընթացիկ՝ դպրոցի ուսումնական մասին վերաբերեալ գործերից, ինչպէս են աշակերտուհիների ընդունելութիւն, փոխադրութիւն, յառաջադիմութեան ստուգութիւն, վարք, դասագրքերի ընտրութիւն, կարգապահութիւն և այլն՝ տարուայ ընթացքում պարապել է նաև հետևեալ հարցերով.

1. Դրադարանի կանոնաւորում.
2. Ընթերցանութեան կանոնաւորում։
3. Նկարչութեան դասընթացի բարուոքում.
4. Հայերէնի ուղղագրութեան (ու, ւ, վ) մասին որոշում.
5. Թուանշաններ դնելու հարցը.
6. Աշակերտական զբօսանքների և էկսկուրսիաների կազմակերպութիւն.
7. Աշակերտուհիների առողջական վիճակը.
8. Աշակերտուհիների միօրինակ տարազ և պճնասիրութեան դէմ միջոցներ.
9. Դպրոցի ծառայողների համար թոշակարկղի և փոխատու գանձարանի կանոնադրութեան մշակութիւն, և այլն։

Տարուայ ընթացքում մի անգամ էլ (փետրուարի 2-ին) տեղի ունեցաւ խառն ժողով, հոգաբարձական և մանկավարժական կազմի մասնակցութեամբ։ Խառն ժողովի խորհրդակցութեան առարկաներն էին—դպրոցի ներքին կանոնադրութիւն մշակելու կարիքը.—աշակերտուհիների ուսման վարձի կանոնաւորումը.—դպրոցի ծառայողների համար թոշակարկղի հիմնարկութիւն։

Թէ Մանկ. ժողովի և թէ խառն ժողովի մէջ մշակուած հարցերից ոմանք նոյն տարին գործադրութեան մէջ մտան, միւսները մնացին առաջիկայ տարում իրագործելու։

ԴՊՐՈՑԻ ԴՐԱԴԱՐԱՆԸ

Հաշուէտուութեան տարուայ սկզբին դպրոցի գրադա-

րանը անկերպարան վիճակի մէջ էր. գոյութիւն ունեցող գրքերը և ցուցակը միմեանց չէին համապատասխանում. շատ գրքեր նշանակուած էին ցուցակում, որոնք իրօք չը-կային. ընդհակառակը կային գրքեր, որոնք ցուցակագրը-ուած չէին. չկային տեղեկացոյցներ դպրոցից դուրս տը-ուած և յետ ստացուած գրքերի։ Գրքերը զետեղուած էին մի քանի դարակներում, որոնք գրված էին զանազան տեղերում. գրքերի մի մասը կազմած չէր. մի մասն էլ չցուցակագրված դպրոցի մի ու�պահարանում ածուած էր փոշիների մէջ։ Ընթերցանութեան համար մշակուած կարգեր ու կանոններ չկային. գրադարանի պահպանու-թիւնը և գրքեր բաժանելը իբրև մի յատուկ պատասխա-նատու պաշտօն չէր նկատուած, այլ յանձնւում էր պա-տահականութեամբ այս կամ այն ուսուցչին։

Այս դրութեան մէջ՝ անկարելի էր գրադարանից ըն-թերցանութեան գրքեր դուրս տալը. անհրաժեշտ էր նախ և առաջ կարգաւորել գրադարանը և սահմանել ընթերցա-նութեան համար կարգեր ու կանոններ։ Ընտրուեց պա-պատասխանատու գրադարանապետ (պ. Գ. Յովսէփեան). բոլոր գրքերը ի մի հաւաքուեցին, կազմուեցին, ապա բո-լորը համարակալուեցին և մանրամասն ցուցակագրուեցին երկու առանձին մատեանում (հայերէն և ռուսերէն). ա-պա կազմուեց համառօտ շարժական այբուբենական ցու-ցակ բոլոր գրքերի (ամեն մի գիրք մի թերթիկի վրայ)։ Նոյն կարգով կազմուեցին, ցուցակագրուեցին ու համարա-կալուեցին տարուայ ընթացքում Մանկ. ժողովից ընտրուած և հոգաբարձութեան հաւանութեամբ գնուած նոր գրքերը։ Տարուայ վերջում դպրոցն ունէր արդէն կարգի բերուած թէև համեստ գրադարան, որ պարունակում էր 435 ա-նուն հայերէն, 646 անուն ռուսերէն և 75 անուն այլ լեզուներով գրքեր։

Գրադարանի այս կարգաւորումը գլուխ եկաւ շնոր-հիւ գրադարանապետ պ. Յովսէփեանի անձնանուէր և տո-կուն աշխատութեան, որի համար պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնել նրան։

Այս աշխատանքի հետ զուգընթաց Մանկ. ժողովը մշակեց կանոններ՝ դպրոցի դրադարանից գրքեր ստանալու մասին. կազմեց ցուցակներ՝ իւրաքանչիւր դասարանի համար յանձնարարուած ընթերցանելի գրքերի. սահմանեց միջոցներ աշակերտուհիների ընթերցանութեան վրայ հրակելու. և նրան ղեկավարելու։

Ուրեմն հաշուէտուութեան տարում դրադարանի վրայ և ընթերցանութեան մասին նախապատրաստական աշխատանքներ կատարուեցին՝ առաջիկայ 19¹¹/₁₂ թուականին դրադարանը աշակերտուհիներին օգտակար դարձնելու նպատակով։ Իսկ այս հաշուէտուութեան տարում աշակերտուհիները ընթերցանութեան գրքեր ստանում էին Կ. Հ. Բ. Ընկերութեան դրադարանից, որի Խորհուրդը բարեհաճեց Հոգաբարձութեան պատասխանատուութեամբ, աշակերտուհիներին ազատել գրաւական ներկայացնելուց։

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

Դպրոցի ծրագրով բաւական ժամեր յատկացուած են դասարանական երաժշտութեան և խմբական երգեցողութեան։ Կարևոր դատուեց, որ երգեցիկ խումբը, բացի աշխարհիկ երգեցողութիւն սովորելուց՝ ամբողջապէս սովորի և պատարագի բազմաձայն երգեցողութիւնը, որպէս զի կարողանայ, հարկաւոր պարագաներում, երգել եկեղեցիներում։ Այս կարգադրութեան նպատակն էր՝ մի կողմից՝ դպրոցից կախուած միջոցներով նպաստել եկեղեցու բարեզարդութեան և միւս կողմից աշակերտուհիներին աւելի սերտ կապել իրանց մայրենի եկեղեցու հետ։ Այս կարգադրութիւնն, ըստ պայմանի, իրագործելու հետամուտ եղաւ նոր հրաւիրուած ուսուցիչ և խմբապետ պ. Ա. Տէր-Յովսէփեանը, որ բացի սահմանուած դասերից, յօժարակամ խմբական երգեցողութեան լրացուցիչ պարապմունքներ էր սահմանում վարչութեան թոյլտուութեամբ, որի համար արժանի է շնորհակալութեան։ Տար-

ունեցող
ուայ ընթացքում խմբի պատրաստութիւնն այ
գնաց, որ 1911 թուականի Զատկին առաջին անգամ մեր
դպրոցի իգական քառաձայն խումբը Կուսանաց
ցում երգեց պատարագը և այնուհետև շարուն
գել տարուայ ընթացքում դարձեալ 3—4 անգամ։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ, ԵՐԵԿՈՅԹՆԵՐ, ԶՐՕՍԱՆՔՆԵՐ

Տարուայ ընթացքում կազմակերպուեցին մի քանի դասախօսութիւններ, երեկոյթներ և զրօսանքներ։ Նպատակն էր—աշակերտուհիների մէջ զարթեցնել սուփնասիրութիւն և ինքնուրոյն աշխատանքի թիւն, զարգացնել նրանց մէջ գեղագիտական ճաշակ սերտ կապ ստեղծել աշակերտութեան և դպրոցի միջև նրանց մանկական հասակին անհրաժեշտ բաւականութիւններ, որոնցից շատերը դուրկ են ընտանեկան անբարենպաստ պայմանների շնորհիւ, և վերջապէս նպաստել նրանց առողջութեան։

Դասախօսութիւնները լինում էին ուսուցչական և աշակերտական։

Ուսուցչական դասախօսութիւններ կայացան երեք անգամ. դասախօսեցին—

Պ. Ն. Սարգսեան «Այերօպլանների մասին»։

Պ. Ա. Մալխասեան «Ճորտերի ազատութեան մասին» և «Լ. Տոլստոյ իբրև գեղարուեստական գրող»։

Աշակերտական դասախօսութիւններ, (ըէֆէրատներ), որ կարդում էին աշակերտուհիները և ապա տեղի էին ունենում վիճաբանութիւններ ուսուցչի ղեկավարութեամբ՝ տեղի ունեցան նոյնպէս երեք անգամ. ըէֆէրատներ կարդացին—

Օր. Պոլոյեան՝ Պէշիկթաշլեանի մասին.

Օր. Ջիջինեան՝ Պարոնեանի մասին և

Օր. Գրիգորեան Աննա Ըէֆորմացիայի մասին։

Երեկոյթները կազմակերպուեցին մի քանի անգամ,

փոքրերի համար առանձին և մեծերի համար առանձին։ Այս երեկոյթների ժամանակ բացի գրական բաժնից առանձին ուշադրություն էր դարձուած երգեցողության վրայ։ Երեկոյթներին հետևում էին հիւրասիրություն աշակերտուհիներին դպրոցի հաշուով և ապա պարեր։ Գրական-երաժշտական երեկոյթները կազմակերպուում և կառավարուում էին Մանկ. ժողովից ընտրուած մանուժողովների ձեռքով. առանձնապէս երաժշտական բաժնին հոգ էր տանում և կազմակերպում էր պ. Դէմիրճեանը, որի յօրինած «Վիճակ» երաժշտական պատկերը մեծ բաւականություն պատճառեց։ Շնորհակալություն եմ յայտնում պ. Դէմիրճեանին, նոյնպէս և տիկ. Դաւթեանին և օր. Մուրադեանին՝ երեկոյթների տնտեսական մասի հոգատարության համար։

Զբօսանքներ մի քանի անգամ կատարվեցին Թիֆլիսի շրջակայքում՝ ուսուցիչների մասնակցությամբ, մի քանի խմբերի բաժանելով։ Առանձնապէս յիշելու է ուղևորությունը դէպի Անի, որ տեղի ունեցաւ քննություններից յետոյ, յունիսի 6—10-ին։ Ուղևորության մասնակցում էին դպրոցի ընթացաւարտ աշակերտուհիները (24 հոգի), 7 ուսուցիչ-ուսուցչուհի և մի քանի կողմնակի տիկիններ և օրիորդներ։ Ուղևորության ծախսը հոգացին մասամբ աշակերտուհիները և մասամբ դպրոցը, որ այս նպատակի համար նուիրեց 144 ր.։ Ուսուցիչ-ուսուցչուհիներն ու կողմնակի անձերը գնացին իրանց ծախսով։ Ուղևորության ժամանակ տնտեսական կառավարության հոգն ստանձնեց պ. Յ. Մելիք-Զհանեան, որին յայտնում եմ շնորհակալություն։

Մեր այս դպրոցական ուղևորության ժամանակ աջակցություն և հիւրընկալություն ցոյց տուին Ալէքսանդրապոլում՝ ս. Փրկչի դպրոցի Հոգաբարձության նախագահ հ. Թաչվանքեանը, նոյն դպրոցի ուսուցիչ պ. Գ. Միքայէլեանը։ Արգինայ գիւղում՝ պ.պ. Տէր-Մարտիրոսեանները և ուսանող պ. Հայրապետեանը, Անիում՝ վա-

նահայր հ. Միքայէլեանը և Թ. քահանայ Սամբոլեանը, մանաւանդ պրոֆէսոր Մառը, որ երկու անգամ, երկերկու ժամ, խումբը շրջեցրեց մուզէյները և միջնաբերդը և իր գիտական հետաքրքրական բացատրութիւններով ծանօթացրեց խմբին Անիի անցեալ կեանքն ու քաղաքակրթութիւնը, խոր տպաւորութիւն թողնելով խմբի վրայ։ Սրանց բոլորին և առանձնապէս պրոֆ. Մառին յայտնում եմ խորին շնորհակալութիւն։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0026964

ЦЕНА
3250